

Հ. Բեռնարդինոս Պիանզոլա՝ փրանկիսկեան կրօնաւոր մ'է, որ տասներկու տարի ապրեցաւ Թուրքիոյ առաքելութեանց մէջ, և աստ ի Պատաւիոն, իրեններուն վանքին մէջ, գրեց ըզմամբիւ գրքեր բարոյականի և քրիստոնէական վարդապետութեան՝ խալ, լատին, հասարակ յոյն և թուրք լեզուներով։ Այս երկու վերջին լեզուներով տպեց նաև զգրքի մի՝ նոցա ուսուցումը դիւրացնելու նպատակաւ, հանդերձ համառօտ քերականութեամբք, բառարաններով, գրուցատրութեամբք և առականերով, և այս բոլորը մեր ընկ թառերով գրելով։ Թուի թէ առաջին հրատարակութիւնն եղեր է յամին 1781. տոյոյ է՝ թէ երկրորդն եղեր է յամին 1789, երեք հատորներու մէջ. այս տեղ ես միայն երրորդ հրատարակութեան անունը կու տամ։

Քերականութիւն, բառագիրք և խօսակցութիւնք՝ առանկուս համար խալ, աշխարհիկ-յոյն և թուրք լեզուները և զանազան գիտութիւններ. երկախորտքիւն հ. վարժապետ Բ. Պիանզոլայի. վենետիկ, Ս. Չատտա, 1801։ Միայն այս վերջին տպագրութեան մէջ կը գտնենք չորրորդ հատոր մի, որոյ վերայ կ'արժէ անկարկ մի տալ, և կը թովանդակէ բոլորքէն և խալերէն և հայ-խալերէն։

Եայտնի է թէ ախորժելի են հայոց ո՛ր և է ուսումնասիրութիւն՝ որ լինի իրենց լեզուին նկատմամբ, նոյն իսկ ամենամանր հետազոտութիւնք՝ և որոնք, Հաջուագիւտ գրքերու մէջ՝ ինչպէս են Պիանզոլայիններն, դիւրաւ կը վրիպին հետաքրքիրներու մտադիւրութեանէ։ Սկսինք այս մեծ հատորիս նախադրութիւնէն։ Եոյն-խալերէն բառարանին

պատշաճ համարեցաւ, կ'ըսէ Պիանզոլա, անեցրնէլ նաև համառօտ աշխատեանական ցոռակ մի ինչ ինչ եկեղեցական բաներու, և Աստուածաշունչի ՀՔ (Եօթնաստեղեկոյն) գրոց՝ հայերէն և խալերէն լեզուներով՝ աս ի դիտումս բիւն առաքելական քարոզչաց ոմանց, որոնք՝ խօսելով հայոց հետ՝ բոլորքէն բացատրութեան մէջ տոյոր են գործածել քանի մի հայերէն եկեղեցական բաներ, բոլորքէն լեզուին մէջ չի գտնուելով շատ յատուկ բաներ, որոնք քրիստոնէից այնպիսի սրբազան և եկեղեցական սովորութիւնները նշանակեն։ Փիտեմ և կը խոստովանինք թէ այս հակիրճ բառարանս և ցանկս լին պարտանկեր յոյոր բոլորք, հայ և խալ բաները, և թէ բաները ձիւր տառադարձութեամբ գրուած լին. բայց ո՞վ որ ինժմէ անչի ասողութիւն, ժամանակ, յարողութիւն և համընդարիւն ունի, թոյ յանկուած ընէ և սրբագրէ զանոնք¹⁾։

Սակաւ կը խոստանայ և ամենասակաւ բան կու տայ մեղ բարեմիտ կրօնաւորն. որովհետեւ բաց ի Աստուածաշունչի գրքերու անուններէն (Zununtotz — ծննդոց, elitz — ելից,

1. «Al vocabolario greco italiano ho giudicato bene di aggiungervi anche un breve catalogo alfabetico di alcune parole ecclesiastiche, e de' LXXII libri della Sacra Scrittura in armeno ed italiano per comodo di alcuni missionari apostolici, i quali, parlando cogli armeni, sogliono con la sintassi turca far uso d'alcune parole armene ecclesiastiche; tanto che nella lingua turca non ci sono molte parole proprie espressioni le così sacre ed ecclesiastiche usate delli cristiani. Lo so e confesso che questo breve vocabolario e catalogo non contengono tutte le parole turche, armene ed italiane, e che le voci non sono scritte con esatto alfabeto, ma chi ha più sanità, tempo, abilità e pazienza di me, ne faccia l'aggiunta e la correzione».

1. «Grammatica, dizionarij e colloquj per imparare le lingue italiana, greca-volgare e turca e varie scienze, opere del p. maestro B. Pianzola. Venezia, A. Zatta, 1801».

2. «Contenente il turco e l'italiano ed armeno-italiano».

gheudavoz¹ — զեւտացոց, tevotz — թուոց, են), երկու դոյզն էլիկներու մէջ, ուրիշ բան չի տար մեզ՝ բայց միայն 167 հայ բառեր, որոց տառագրութեանը ուշ պիտի դնենք, իբր նշան իւր ժամանակին գրութեանը: Պիտի դնեմ տառ ի ստորեւ այն ամէն բառերը՝ որոնք B և M գրերու մէջ կը գտնուին, և ուրիշ մեկնութեան հարկ չի կայ գրեթէ.

Badk'gh, պատկերք.

Badiv, պատիւ.

Badarak, պատարագ.

Badvirant, պատուիրան.

Bahabnn Resdak, պաշապան հրեշտակ.

Ամէն մարդ կը տեսնէ թէ պէտք էր գրել *badghier* և *hresdag*, տպագրութեան վրիպակ է՝ և ոչ Պիտնզուլայի՝ գրելն *bahabnn* — է գիրն *badviran* (կամ *baduiran*) բառին՝ սպրդեր է բառարանիկին մէջ գրքէ մի, յորում ցուցական կամ գիմորոշ յօդն հիշդ իւր սեղը դիտուած էր:

*Marmnarutiun*², մարմնաւորութիւն (*Marmnaroutiun*).

Masunk, մասունք (Reliquie).

Marghos, Մարկոս.

Mezavor, մեծաւոր.

Mab, մահ (տպագրութեան վրիպակ է այդ փոխանակ mah գրելու).

Marmnavor, մարմնաւոր.

Markare, մարգարէ (հեղինակն վրիպակաւ patriarcha կը դնէ դիմացը).

Mezbak, մեծ պահք.

*Mravorel, միաւորել, (տպագրութեան վրիպակ է այդ՝ փոխանակ գրելու *Miavorel*).*

Matsu, մահացու.

Masdotz, մաշտոց կամ ծխարան.

Megha, մեղայ.

Պիտնզուլա տառերուն ուշ չի դնեմ, այլ միայն հնչման կը նայի. ուստի գ և ք հաւասարք են իրեն համար, և ճ գիրն կ'անհետանայ (*badkh, mahitsa*). Դարձեալ կը կրկնեմ թէ ամենասակաւ բան կայ իւր գրքին մէջ, և թէ քարոզչին չի ներկայանար մեզ հայագիրտի զգեստով:

Խօսքս աւարտելէն յառաջ՝ ուրիշ համառօտ դիտողութիւն մ'այլ կը յաւելում հայոց համար: Մեծ հեղինակութիւն ունեցող մարդ մի, Մարկոս Փոսկարինի դուքսն (*Վենետոյ*), իւր վենետիկեան գրականոթեան մէջ (կը յիշեմ տառ կրկին տպագրութիւնը 1854ին ի *Վենետիկ*) կը գրէր անանուն վաճառականի մի նկատմամբ, — որու մասին տեղեկութիւններ կը գտնենք Քաճուռեայ գրքին մէջ (*Viaggi*, vol. II, p. 78), — թէ ինքը շատ շատ գիտեր արաբերէն, թուրքերէն և հայերէն՝ (էջ 435), և կ'ազդարարէ մեզ ծանօթութեան մէջ՝ թէ ինչպէս իւր յղեւորաթեան (գրքին) մէջ հայ լեզուն կը կոչէ աշեմն (*azemina*), մեր հին գրքերոյ գործածութեան համեմատ, որ անցեր է նաև տոսկան գրութեանց մէջ²:

Վրիպակն մեր վաճառականին չէ, որ կը հաստատէր թէ գիտէր ինքն թուրքերէն, արաբերէն և աճեմներէն (*azemino*), զոր ամէն ոք պիտի հասկանայ պարսկերէն, եթէ ուշ չեն աճեմ բառին, ինչպէս կ'ըսեն թուրք լոյս, ինչ իմաստով որ կը գործածէին աւարացիք և որոնք ուսան իրենցմէ: Քալով գրքերու մէջ գտնուած, *azzemino* բառին, գործածուած է միայն՝ ըստ իմ գիտութեան՝ Պարսկաստանէն եկած երկնագրուագ բանուածներուն և ոչ թէ նոցա խօսած լեզուին համար: Եւ յիշուի, Մարկոս Փոսկարինի գեղեցիկ հմտութեան վարժապետ լինելով, հարկ է գտել նորա ոսկին:

Ի. Տեղա

1. Թեբէի է այդ բառը, զի նոյն իսկ հեղինակին գործածած վրիպակ տառադարձութեամբ գրելով, պէտք է լինէր «gheudatzvotz».

Ի. Թ.

2. Հայերեն կայ նաև *Բաշմաշտոյն*, և այս բառին տեղը գրուած է խալիբէն, հետեւաբար վրիպակ է՝ ոչ հեղինակին և ոչ տպագրութեան: Ի. Թ.

1. Egli «sapeva benissimo l'arabo, il turco e l'armeno» (p. 435).

2. Come nel suo Viaggio egli «chiama la lingua armena *azemina*, secondo l'uso delle nostre scritture vecchie, passato anche nelle toscane».

